ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 149ԿԼ

24 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ի.Միչուրինի փողոցի թիվ 1բ բնակելի տան բնակիչ՝ Արտակ Ռաֆիկի Պողոսյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ թիվ 19082024-04-0066, տրված՝ 19.08.2024թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 09.09.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ /04011MLYFWHG, 04011FLJRVD3.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 14/4 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին Սուրբ Մ.Մաշտոցի փողոց թիվ 14/4 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ.Մաշտոցի փողոց թիվ 14/6 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1497Կ

24 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 24 շենքի թիվ 4 բնակարանի բնակիչ՝ Լալա Մկրտիչի Մելքոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարշալ Բաղրամյան փողոցում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Վաղարշապատ» նոտարական տարածքի նոտար Վրեժ Ղարիբյանի կողմից 06.10.2017թ. կնքված թիվ 6459 և 6460 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրեր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011KSCQFQW/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Մարշալ Բաղրամյան փողոց, թիվ 24/4 ավտոտնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14984Կ

24 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի Խանջյան փողոցի թիվ 3 տան բնակիչ՝ Սաշիկ Աղվանի Մկրտչյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 04092024-04-0029 տրված՝ 04.09.2024թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 06.09.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011AJNNYNX, 04011LAHWPK8, 040113LP7CMW. /.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ. Տերյան փողոցի թիվ 20/4 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վ. Տերյան փողոց թիվ 20/4 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վ. Տերյան փողոց թիվ 20/8 հողամաս:

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վ. Տերյան փողոց թիվ 20/9 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1499Կ

24 սեպտեմբերի 2024թ. գ. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆԱՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նոր Եվդոկիա փողոցի թիվ 39 տան բնակիչ՝ Հակոբ Մանուկի Ղազարյանի դիմումը՝ պարզվեց, որ համաձայն /«Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 29.12.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011PBMAW9Q/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նոր Եվդոկիա փողոցի թիվ 39 հասցեում գտնվող 0.04հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա Հակոբ Մանուկի Ղազարյանի կողմից որպես սեփականություն տիրապետվող բնակելի տան և բնակելի նշնակության օժանդակ շինությունների նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված հողհատկացման և քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նոր Եվդոկիա փողոցի թիվ 39 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և 0.04հա մակերեսով հողամասը համարել Հակոբ Մանուկի Ղազարյանի /ծնված՝ 25.09.1955թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15004

24 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նոր Եվդոկիա թիվ 39 տան բնակիչ՝ Հակոբ Մանուկի Ղազարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նոր Եվդոկիա թիվ 39 հասցեում գտնվող անշարժ գույքին / հիմք՝ կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011PBMAW9Q/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Նոր Եվդոկիայի փողոց թիվ 39 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 150/4Ա

24 սեպտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Թորամանյան փողոցի թիվ 27 տան բնակիչ Վարդան Գառնիկի Գրիգորյանը՝ իրեն, Մարգարիտ Զաքարի Բաղրամյանին, Գառնիկ Վարդանի Գրիգորյանին և Գոհար Վարդանի Գրիգորյանին պատկանող /հիմք՝ 10.05.1998թ. տրված թիվ 239090 հողի սեփականության իրավունքի պետական ակտ, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 08.08.2024թ. տրված թիվ 4215 քաղվածք, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 08.08.2024թ. տրված տեղեկանք և <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.07.2024թ. կազմված հատակագիծ/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0388-0003/, 1.0հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը, ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու, փոխադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0388-0003/ 1.0հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու /կորիզավոր/:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1502-Ա

«24» սեպտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 8 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակիչները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում, Վաղարշապատի համայնքապետարան են դիմել թվով 8 բնակիչներ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2024թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի թվով 8 բնակիչների հատկացնել 472200 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված

ՑՈՒՑԱԿ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 8 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «24» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024Թ. ԹԻՎ 1502-Ա ՈՐՈՇՈՒՄՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Հասցե	Անձնագրի N	Գումար
1.	Մանուկյան Նաիրա Արկադիի	գ. Ոսկեհատ, Բաղրամյան 9	AT0221874	40200
2.	Խաչատրյան Լուսիկ Նշանի	Դավիթ Անհաղթ25/29	AL0313442	40200
3.	Մարտիրոսյան Աստղիկ Ռազմիկի	Չարենց 17/12	AS0569125	50200
4.	Ղարսլյան Աղասի Այվազի	Նարեկացի 50ա	014894497	50200
5.	Խումարյան Արմինե Սեպույի	Սոս Մանուկյան 13	AV0431233	50200
6.	Գրիգորյան Նելլի Սարգսի	Չարենց 9/14	012457172	60300
7.	Կադուրյան Էվելիրա Արտավազի	Անդրանիկ 3թղմ. 102	005749528	80400
8.	Եղիազարյան Անահիտ Գրիգորի	Բաղրամյան 24/22	AS0353462	100500
ԸՆԴԱՄԵՆԸ				472200

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15034

«24» սեպտեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 63/24 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից արտաքին գովազդային վահանակ տեղադրելու մասին, պարզեց.

«Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատերը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Եկմալյան փողոցի թիվ 27 տուն, Պետ.հաշվառման համար՝ 38.05072/2008-03-07, ՀՎՀՀ՝ 52158016, անձնագիր՝ AT0541072, տրված 13.08.2020թ. 057-ի կողմից) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականություն, ինչի կապակցությամբ առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու վերաբերյալ 2024 թվականի օգոստոսի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի հարուցման մասին «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատիրոջը ուղարկվել է ծանուցում և հրապարակվել է ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում: Վերջինիս առաջարկվել է այն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և/կամ միջոցներ ձեռնարկել գովազդային վահանակների տեղեդրման թույլտվության ստացման ուղղությամբ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատիրոջը ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, պնդում չի ներկայացվել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

- Համայնքի ղեկավարի 29.08.2024թ.-ի թիվ 4370 գրությունը:
- Արտաքին գովազդի տեղադրման լուսանկարահանման փաստաթղթերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակներ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականությունը:

Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.</u>

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին ու պայմաններին համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ սահմանում է համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանվել է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ այսուհետ Կարգ:

Մասնավորապես՝ Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա տեղադրվող (այսուհետ՝ գովազդ), տեղադրման կարգն ու պայմանները և այդ գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները:

Նույն Կարգի 3-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գովազդը տեղադրվում է վահանակներների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, էլեկտրոնային էկրանների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ), այլ նյութական կրիչների և տեխնիկական միջոցների (այսուհետ՝ գովազդի միջոցներ) ձևով:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է մի շարք հասկացություններ, համաձայն որի՝

գովազդ՝ տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

գովազդատու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ներկայացնում է գովազդային տեղեկություն գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման նպատակով:

գովազդակիր՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը տրամադրելով՝ համապատասխան միջոցներ, տեղաբաշխում և տարածում է գովազդը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակներների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող շինության վրա «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված է վահանակ, որը համաձայն գործում առկա լուսանկարի՝ պարունակում է «ԱԼԻՆԱ հազար ու մի հագուստ» գրառումը, «զինվորի համար, տղամարդու, կանացի, մանկական, տան համար» գրառումները և ապրանքների նկարներ:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող շինության վրա առկա գովազդային վահանակների բովանդակությունից պարզ է դառնում, որ «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատիրոջ

կողմից տեղադրված գովազդային վահանակներում առկա նշումները գովազդ են, քանի որ պարունակում են իրավաբանական անձի, ապրանքի, գաղափարների կամ նախաձեռնության մասին տեղեկատվություններ, որը նախատեսված է անորոշ թվով անձնաց շրջանակում տարածումն ապահովելու համար և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

Այսպիսով, գտնում եմ, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող շինության վրա «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված վահանակները ակնհայտ գովազդ է:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն՝ արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները:

... Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենապյուների, էլեկտրապյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի համաձայն՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար վճարվում է տեղական տուրք՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-րդ կետի համաձայն՝ բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերի ընդհանուր բաժնային սեփականության վրա գովազդ, գովազդի միջոց տեղադրելու թույլտվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված համապատասխան համաձայնության առկայության դեպքում:

Իսկ Կարգի 11-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա, գովազդ տեղադրելու թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների:

Վաղարշապատ համայնքի ավագանու 27.12.2023 թվականի «Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» թիվ 104-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվել է տեղական տուրքի հետևյալ դրույքաչափը՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

Այսպես, վերոգրյալից հետևում է, որ «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից գովազդային վահանակներ տեղադրելու համար «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանված կարգով վերջինս պետք է դիմեր համայնքի ղեկավարին այն համապատասխանեցնելու և տեղադրման թույլտվություն ստանալու համար, որի համար օրենքով սահմանված կարգով պետք է նաև վճարեր համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրք:

Վաղարշապատ համայնքի ղեկավարի գրությամբ «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատիրոջը 29.08.2024թ.-ի թիվ 4370 գրությամբ առաջարկվել է ՀՀ օրենքներով և համայնքի ավագանու որոշումամբ սահմանված կարգով դիմել Վաղարշապատի համայնքապետարան և ստանալ համապատասխան թույլտվություն, որիը սակայն մնացել է անպատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանը, որ «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատերը սույն տարվա ընթացքում չի դիմել արտաքին գովազդ տեղադրելու համար և չի կատարել տեղական տուրք վճարելու իր պարտականությունը, գտնում եմ, որ «Ալինա Եղիազարյան Կարապետի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող շինության վրա տեղադրված գովազդային վահանակը ապօրինի է, ուստի այն ենթակա է ապամոնտաժման:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ և 13.1-րդ հոդվաներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023թ-ի թիվ 33-Ն և 27.12.2023թ.-ի թիվ 104-Ն որոշումներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ապամոնտաժել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի տեղադրված արտաքին գովազդային վահանակը:

2. Ապամոնտաժման աշխատանքները հանձնարարել համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ին:

3.Գովազդի (գովազդային վահանակների) ապամոնտաժման համար կատարված աշխատանքների դիմաց համապատասխան փոխհատուցումը /ներկայացված հաշվարկի հիման վրա/ օրենքով սահմանված կարգով ստանալ գովազդատուից (գովազդակրից):

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15041

«24» սեպտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 64/24 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 31/5 հասցեում ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի Ասատուր Հարությունի Խաչիկյանի կողմից արտաքին գովազդային վահանակ տեղադրելու մասին, պարզեց.

Ասատուր Հարությունի Խաչիկյանը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Զորավար Անդրանիկի թղմ., թիվ 56 տուն, ն/ք՝ 015525744, տրված 16.02.2024թ. 057-ի կողմից) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 31/5 հասցեում ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականություն, ինչի կապակցությամբ առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու վերաբերյալ 2024 թվականի օգոստոսի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Ասատուր Հարությունի Խաչիկյանը վարչական վարույթի հարուցման մասին պատշաճ ծանուցվել է /հիմք 29.08.2024 թվականի թիվ 4373 գրություն և փոստային ծանուցագիր՝ ALO124203220AM/: Վերջինիս առաջարկվել է այն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և/կամ միջոցներ ձեռնարկել գովազդային վահանակների տեղադրման թույլտվության ստացման ուղղությամբ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ասատուր Հարությունի Խաչիկյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, պնդում չի ներկայացվել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

- Համայնքի ղեկավարի 29.08.2024թ.-ի թիվ 4373 գրությունը:
- Արտաքին գովազդի տեղադրման լուսանկարահանման փաստաթղթերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ասատուր Հարությունի Խաչիկյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 31/5 հասցեում ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակներ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականությունը:

Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին ու պայմաններին համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ սահմանում է համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանվել է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ այսուհետ Կարգ:

Մասնավորապես՝ Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա տեղադրվող (այսուհետ՝ գովազդ), տեղադրման կարգն ու պայմանները և այդ գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները:

Նույն Կարգի 3-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գովազդը տեղադրվում է վահանակներների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, էլեկտրոնային էկրանների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ), այլ նյութական կրիչների և տեխնիկական միջոցների (այսուհետ՝ գովազդի միջոցներ) ձևով:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է մի շարք հասկացություններ, համաձայն որի՝

գովազդ՝ տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

գովազդատու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ներկայացնում է գովազդային տեղեկություն գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման նպատակով:

գովազդակիր՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը տրամադրելով՝ համապատասխան միջոցներ, տեղաբաշխում և տարածում է գովազդը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակներների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 31/5 հասցեում Ասատուր Հարությունի Խաչիկյանի կողմից տեղադրված է վահանակ, որը համաձայն գործում առկա լուսանկարի՝ պարունակում է «ՇԻՆԱՆՅՈՒԹ, ՑԵՄԵՆՏ, ԱՎԱԶ, ԲԼՈԿ Մ500 2600ԴՐ», «ԱՌԱՔՈՒՄ՝ 077 14 44 05, ՊԱՐՍԿԱԿԱՆ Մ500 2600ԴՐ» գրառումները և ապրանքների նկարներ:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 31/5 հասցեում առկա գովազդային վահանակների բովանդակությունից պարզ է դառնում, որ Ասատուր Հարությունի Խաչիկյանի կողմից տեղադրված գովազդային վահանակներում առկա նշումները գովազդ են, քանի որ պարունակում են իրավաբանական անձի, ապրանքի, գաղափարների կամ

նախաձեռնության մասին տեղեկատվություններ, որը նախատեսված է անորոշ թվով անձնաց շրջանակում տարածումն ապահովելու համար և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

Այսպիսով, գտնում եմ, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 31/5 հասցեում Ասատուր Հարությունի Խաչիկյանի կողմից տեղադրված վահանակները ակնհայտ գովազդ է:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն՝ արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները:

... Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենապյուների, էլեկտրապյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի համաձայն՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար վճարվում է տեղական տուրք՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-րդ կետի համաձայն՝ բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերի ընդհանուր բաժնային սեփականության վրա գովազդ, գովազդի միջոց տեղադրելու թույլտվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված համապատասխան համաձայնության առկայության դեպքում:

Իսկ Կարգի 11-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա, գովազդ տեղադրելու թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների:

Վաղարշապատ համայնքի ավագանու 27.12.2023 թվականի «Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» թիվ 104-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվել է տեղական տուրքի հետևյալ դրույքաչափը՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

Այսպես, վերոգրյալից հետևում է, որ Ասատուր Հարությունի Խաչիկյանի կողմից գովազդային վահանակներ տեղադրելու համար «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանված կարգով վերջինս պետք է դիմեր համայնքի ղեկավարին այն համապատասխանեցնելու և տեղադրման թույլտվություն ստանալու համար, որի համար օրենքով սահմանված կարգով պետք է նաև վճարեր համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրք:

Վաղարշապատ համայնքի ղեկավարի գրությամբ Ասատուր Հարությունի Խաչիկյանը 29.08.2024թ.-ի թիվ 4373 գրությամբ առաջարկվել է ՀՀ օրենքներով և համայնքի ավագանու որոշումամբ սահմանված կարգով դիմել Վաղարշապատի համայնքապետարան և ստանալ համապատասխան թույլտվություն, որիը սակայն մնացել է անպատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ Ասատուր Հարությունի Խաչիկյանը սույն տարվա ընթացքում չի դիմել արտաքին գովազդ տեղադրելու համար և չի կատարել տեղական տուրք վճարելու իր պարտականությունը, գտնում եմ, որ Ասատուր Հարությունի Խաչիկյանի կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 31/5 հասցեում տեղադրված գովազդային վահանակը ապօրինի է, ուստի այն ենթակա է ապամոնտաժման:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ և 13.1-րդ հոդվաներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023թ-ի թիվ 33-Ն և 27.12.2023թ.-ի թիվ 104-Ն որոշումներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ապամոնտաժել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 31/5 հասցեում ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի տեղադրված արտաքին գովազդային վահանակը:

2. Ապամոնտաժման աշխատանքները հանձնարարել համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ին:

3.Գովազդի (գովազդային վահանակների) ապամոնտաժման համար կատարված աշխատանքների դիմաց համապատասխան փոխհատուցումը /ներկայացված հաշվարկի հիման վրա/ օրենքով սահմանված կարգով ստանալ գովազդատուից (գովազդակրից):

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1505Ա

«24» սեպտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 66/24 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ. Խորենացի փող., թիվ 20 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից արտաքին գովազդային վահանակ տեղադրելու մասին, պարզեց.

«Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատերը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Պատկանյան փող., թիվ 5 շենք, 4 բն.,Պետ.հաշվառման համար՝ 99.1285744/2022-12-29, ՀՎՀՀ՝ 49790547, անձնագիր՝ AS0389295, տրված 22.12.2018թ. 070-ի կողմից) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ. Խորենացի փող., թիվ 20 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականություն, ինչի կապակցությամբ առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու վերաբերյալ 2024 թվականի օգոստոսի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի հարուցման մասին «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջը ուղարկվել է ծանուցում և հրապարակվել է ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում: Վերջինիս առաջարկվել է այն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և/կամ միջոցներ ձեռնարկել գովազդային վահանակների տեղադրման թույլտվության ստացման ուղղությամբ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջը ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, պնդում չի ներկայացվել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

- Համայնքի ղեկավարի 29.08.2024թ.-ի թիվ 4372 գրությունը:
- Արտաքին գովազդի տեղադրման լուսանկարահանման փաստաթղթերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ. Խորենացի փող., թիվ 20 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակներ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականությունը:

Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.</u>

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին ու պայմաններին համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ սահմանում է համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանվել է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ այսուհետ Կարգ:

Մասնավորապես՝ Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա տեղադրվող (այսուհետ՝ գովազդ), տեղադրման կարգն ու պայմանները և այդ գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները:

Նույն Կարգի 3-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գովազդը տեղադրվում է վահանակներների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, էլեկտրոնային էկրանների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ), այլ նյութական կրիչների և տեխնիկական միջոցների (այսուհետ՝ գովազդի միջոցներ) ձևով:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է մի շարք հասկացություններ, համաձայն որի՝

գովազդ՝ տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

գովազդատու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ներկայացնում է գովազդային տեղեկություն գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման նպատակով:

գովազդակիր՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը տրամադրելով՝ համապատասխան միջոցներ, տեղաբաշխում և տարածում է գովազդը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակներների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ. Խորենացի փող., թիվ 20 հասցեում գտնվող շինության վրա «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված է վահանակ, որը համաձայն գործում առկա լուսանկարի՝ պարունակում է «Զինվորական հագուստ», «Բերետ» գրառումները:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ. Խորենացի փող., թիվ 20 հասցեում գտնվող շինության վրա առկա գովազդային վահանակների բովանդակությունից պարզ է դառնում, որ «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված գովազդային վահանակներում առկա նշումները գովազդ են, քանի որ պարունակում են

իրավաբանական անձի, ապրանքի, գաղափարների կամ նախաձեռնության մասին տեղեկատվություններ, որը նախատեսված է անորոշ թվով անձնաց շրջանակում տարածումն ապահովելու համար և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

Այսպիսով, գտնում եմ, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ. Խորենացի փող., թիվ 20 հասցեում գտնվող շինության վրա «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված վահանակները ակնհայտ գովազդ է:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն՝ արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները:

... Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների, էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի համաձայն՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար վճարվում է տեղական տուրք՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-րդ կետի համաձայն՝ բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերի ընդհանուր բաժնային սեփականության վրա գովազդ, գովազդի միջոց տեղադրելու թույլտվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված համապատասխան համաձայնության առկայության դեպքում:

Իսկ Կարգի 11-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա, գովազդ տեղադրելու թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների:

Վաղարշապատ համայնքի ավագանու 27.12.2023 թվականի «Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» թիվ 104-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվել է տեղական տուրքի հետևյալ դրույքաչափը՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

Այսպես, վերոգրյալից հետևում է, որ «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից գովազդային վահանակներ տեղադրելու համար «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանված կարգով վերջինս պետք է դիմեր համայնքի ղեկավարին այն համապատասխանեցնելու և տեղադրման թույլտվություն ստանալու համար, որի համար օրենքով սահմանված կարգով պետք է նաև վճարեր համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրք:

Վաղարշապատ համայնքի ղեկավարի գրությամբ «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջը 29.08.2024թ.-ի թիվ 4372 գրությամբ առաջարկվել է ՀՀ օրենքներով և համայնքի ավագանու

որոշմամբ սահմանված կարգով դիմել Վաղարշապատի համայնքապետարան և ստանալ համապատասխան թույլտվություն, որիը սակայն մնացել է անպատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանը, որ «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատերը սույն տարվա ընթացքում չի դիմել արտաքին գովազդ տեղադրելու համար և չի կատարել տեղական տուրք վճարելու իր պարտականությունը, գտնում եմ, որ «Արմինե Հայրապետյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ. Խորենացի փող., թիվ 20 հասցեում գտնվող շինության վրա տեղադրված գովազդային վահանակը ապօրինի է, ուստի այն ենթակա է ապամոնտաժման:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ և 13.1-րդ հոդվաներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023թ-ի թիվ 33-Ն և 27.12.2023թ.-ի թիվ 104-Ն որոշումներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ապամոնտաժել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ. Մ. Խորենացի փող., թիվ 20 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի տեղադրված արտաքին գովազդային վահանակը:

2. Ապամոնտաժման աշխատանքները հանձնարարել համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ին:

3.Գովազդի (գովազդային վահանակների) ապամոնտաժման համար կատարված աշխատանքների դիմաց համապատասխան փոխհատուցումը /ներկայացված հաշվարկի հիման վրա/ օրենքով սահմանված կարգով ստանալ գովազդատուից (գովազդակրից):

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1320Ա

«24» սեպտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 65/24 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղի թիվ 26/1 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի «Արման Դանիելյան Ռադիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից արտաքին գովազդային վահանակ տեղադրելու մասին, պարզեց.

«Արման Դանիելյան Ռադիկի» անհատ ձեռնարկատերը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Սոս Մանուկյան 1-ին փակուղի, թիվ 20/1 տուն, Պետ.հաշվառման համար՝ 99.817224/2014-06-13, ՀՎՀՀ՝ 52200186, անձնագիր՝ AR0566276, տրված 24.01.2018թ. 057-ի կողմից) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղի թիվ 26/1 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականություն, ինչի կապակցությամբ առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու վերաբերյալ 2024 թվականի օգոստոսի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

«Արման Դանիելյան Ռադիկի» անհատ ձեռնարկատերը վարչական վարույթի հարուցման մասին պատշաճ ծանուցվել է /հիմք 29.08.2024 թվականի թիվ 4371 գրություն և փոստային ծանուցագիր՝ ALO124203443AM/: Վերջինիս առաջարկվել է այն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և/կամ միջոցներ ձեռնարկել գովազդային վահանակների տեղադրման թույլտվության ստացման ուղղությամբ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Արման Դանիելյան Ռադիկի» անհատ ձեռնարկատերը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, պնդում չի ներկայացվել, լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

- Համայնքի ղեկավարի 29.08.2024թ.-ի թիվ 4371 գրությունը:
- Արտաքին գովազդի տեղադրման լուսանկարահանման փաստաթղթերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Արման Դանիելյան Ռադիկի» անհատ ձեռնարկատիրոջը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղի թիվ 26/1 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակներ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականությունը:

Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին ու պայմաններին համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ սահմանում է համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանվել է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ այսուհետ Կարգ:

Մասնավորապես՝ Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների մոտ տեղադրվող (այսուհետ՝ գովազդ), տեղադրման կարգն ու պայմանները և այդ գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները:

Նույն Կարգի 3-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գովազդը տեղադրվում է վահանակներների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, էլեկտրոնային էկրանների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ), այլ նյութական կրիչների և տեխնիկական միջոցների (այսուհետ՝ գովազդի միջոցներ) ձևով:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է մի շարք հասկացություններ, համաձայն որի՝

գովազդ՝ տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

գովազդատու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ներկայացնում է գովազդային տեղեկություն գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման նպատակով:

գովազդակիր՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը տրամադրելով՝ համապատասխան միջոցներ, տեղաբաշխում և տարածում է գովազդը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակներների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղի թիվ 26/1 հասցեում գտնվող շինության վրա «Արման Դանիելյան Ռադիկի» անհատ ձեռնարկատիրոջ անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված է վահանակ, որը համաձայն գործում առկա լուսանկարի՝ պարունակում է «ԽՈՐՈՎԱԾ, ՔԱԲԱԲ, ԹԱՐՄ ՄԻՍ» գրառումները և ապրանքների /արտադրանքների/ լուսանկարները:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղի թիվ 26/1 հասցեում գտնվող շինության վրա առկա գովազդային վահանակների բովանդակությունից պարզ է դառնում, որ «Արման Դանիելյան Ռադիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից

տեղադրված գովազդային վահանակներում առկա նշումները գովազդ են, քանի որ պարունակում են իրավաբանական անձի, ապրանքի, գաղափարների կամ նախաձեռնության մասին տեղեկատվություններ, որը նախատեսված է անորոշ թվով անձնաց շրջանակում տարածումն ապահովելու համար և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

Այսպիսով, գտնում եմ, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղի թիվ 26/1 հասցեում գտնվող շինության վրա «Արման Դանիելյան Ռադիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված վահանակները ակնհայտ գովազդ է:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն՝ արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները:

... Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների, էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի համաձայն՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար վճարվում է տեղական տուրք՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-րդ կետի համաձայն՝ բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերի ընդհանուր բաժնային սեփականության վրա գովազդ, գովազդի միջոց տեղադրելու թույլտվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված համապատասխան համաձայնության առկայության դեպքում:

Իսկ Կարգի 11-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա, գովազդ տեղադրելու թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների:

Վաղարշապատ համայնքի ավագանու 27.12.2023 թվականի «Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» թիվ 104-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվել է տեղական տուրքի հետևյալ դրույքաչափը՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

Այսպես, վերոգրյալից հետևում է, որ «Արման Դանիելյան Ռադիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից գովազդային վահանակներ տեղադրելու համար «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանված կարգով վերջինս պետք է դիմեր համայնքի ղեկավարին այն համապատասխանեցնելու և տեղադրման թույլտվություն ստանալու համար, որի համար օրենքով սահմանված կարգով պետք է նաև վճարեր համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրք: